Արձանագրություն

Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ. մարտի 30-ի թիվ 3 նիստի

/նիստին մասնակցում էր խորհրդի 39 անդամից 30-ը/

Նիստը բացեց ֆակուլտետի դեկան Է. Գ. Մինասյանը: Նա նշեց, որ լրացել է ֆակուլտետի աշխատակիցներից երկուսի՝ Ս. Մանուկյանի և Ա. Ներսիսյանի պաշտոնավարման ժամկետը և հաստատված ընթացակարգերին համապատասխան հայտարավեր է մրցույթ Հայ Արվեստի պատմության և տեսության ամբիոնի դոցենտի և Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնների համար: Հայտարարությունները սահմանված կարգել հրատարակվել են ''Հայաստանի Հանրապետություն'' օրաթերթում և Համալսարանի կայքում: Այնուհետև դեկան Է. Գ. Մինասյանը ընթացակարգային հարցերը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց գիտական քարտուղար Մ. Գաբրիելյանին, ով նշեց, որ թափուր պաշտոններից յուրաքանչյուրի համար հայտարարված մրցույթին դիմել է 1 –ական թեկնաշու, համապատասխանաբար արվ. թեկն. Ս. Ս. Մանուկյանը՝ Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դոցենտի և Ա. Ներսիսյանը՝ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնների համար: Նրանք սահմանված կարգով ներկայացրել են բոլոր փաստաթղթերը, որոնք քննության են առնվել համալսարանի մրցութային հանձնաժողովում և թեկնածուները սահմանված կարգով թույլատրվել են մրցույթին մասնակցելու համար: Ֆակուլտետ ներկայացված փաթեթներում ներկայացված են բոլոր փաստաթղթերը:

Դեկան Է. Գ. Մինասյանն առաջարկեց սահմանված կարգոն անցնեն փաստաթղթերի քննության ու քվեարկության կազմակերպմանը:

Առաջինը Լսեցին – Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դոցենտի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար Ս. Ս. Մանուկյանի ներկայացրած հայտի քննարկման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ Լ. Բ. Չուգասզյանը, պ. գ. դ., պրոֆ., մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Մ. Աբրահամյանը: Է. Գ. Մինասյանը նշեց, որ թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ թեկնածու՝ ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Սեյրանուշ Սոսի Մանուկյանը: Նրա ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են մրցույթի պայմաններին, քննարկվել են ռեկտորատում, այնուհետև՝ քննարկման համար ուղարկվել են ֆակուլտետ:

Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը, իր նիստում քննարկելով հարցը, միաձայն որոշել է պաշտպանել Ս. Ս. Մանուկյանի թեկնածությունը, հաշվի առնելով վերջինիս մանկավարժական և գիտական հեղինակությունը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Մ. Աբրահամյանը ներկայացրեց Ս. Ս. Մանուկյանի փաստաթղթերը, նշելով, որ նա արդեն տարիներ շարունակ դասավանդում է Երևանի պետական համալսարանում, վարելով ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական դասընթացներ: Ս. Ս. Մանուկյանը զբաղվում է նաև ակտիվ գիտական գործունեությամբ, հեղինակ է 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և ավելի քան 90

գիտական հոդվածի: Մասնակցում է հանրապետական ու միջազգային գիտաժողովների, վերապատրաստման ծրագրերի: Մասնակցում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրին: Ս. Ս. Մանուկյանը վայելում է գործընկերների ու ուսանողների սերն ու հարգանքը: Վերջին 5 տարիների ուսանողական հարցումների նրա միջին գնահատականը կազմում է 4.61:

Ելույթ ունեցողները, բարձր գնահատելով Սեյրանուշ Մանուկյանի մասնագիտական կարողությունները, հեղինակությունը, առաջարկեցին թույլատրել քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում:

Քվեարկությունը կազմակերպելու համար ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ պ. գ. դ., պրոֆ. Ա. Ն. Հայրունի /նախագահ/, անդամներ՝ պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան, ՈՒԳԸ նախագահ Ս. Մ. Բալդարյան:

Քվեարկության ավարտից հետո մրցութային հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է ֆակուլտետի գիտական խորհրդի 39 անդամից 30-ը: Քվեատուփում հայտնաբերվել է 30 քվեաթերթիկ: Վավեր քվեաթերթիկները թիվը՝ 30:

Սեյրանուշ Սոսի Մանուկյանի թեկնածության օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայն:

Է. Գ. Մինասյանն առաջարկեց հաստատել քվեարկության արդյունքները:

Քվեարկության արդյունքները հաստատվեցին միաձայն:

Որոշեցին՝

1. Սեյրանուշ Սոսի Մանուկյանին համարել ընտրված Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Այնուհետև, սահմանված կարգով, **լսեցին** – Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար ներկայացրած հայտի քննարկման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, պ. գ. դ., դոց., Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա. Ե. Մովսիսյանը, մրցութային հանձնաժողովի նախագահ, պ. գ. դ., պրոֆ. Հ. Մ. Աբրահամյանը:

Է. Գ. Մինասյանը նշեց, որ թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ թեկնածու՝ ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Արտաշեսի Ներսիսյանը:

Նրա ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են մրցույթի պայմաններին, քննարկվել են ռեկտորատում, այնուհետև՝ քննարկման համար ուղարկվել են ֆակուլտետ:

Հայոց պատմության ամբիոնը, իր նիստում քննարկելով հարցը, միաձայն որոշել է պաշտպանել Ա. Ա. Ներսիսյանի թեկնածությունը, հաշվի առնելով վերջինիս մանկավարժական և գիտական հեղինակությունը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Մ. Աբրահամյանը ներկայացրեց Ա. Ա. Ներսիսյանի փաստաթղթերը, նշելով, որ նա արդեն տարիներ շարունակ դասավանդում է Երևանի պետական համալսարանում, վարելով ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական դասընթացներ:

Ա. Ա. Ներսիսյանը զբաղվում է նաև ակտիվ գիտական գործունեությամբ: Նա 17 մենագրությունների հեղինակ է, որոնց շարքում հատկապես կարևորվում են «Ազգային – ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ.», «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմություն» հատոր Բ (1899-1908 թթ.) հատոր Գ, (1908-1918 թթ.) աշխատությունները: Աշոտ Ներսիսյանը համահեղինակ է բազմաթիվ ժողովածուների, որոնցում հրատարակվել են գիտական հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ պատմական փաստաթղթեր, նյութեր և այլն: Նա միաժամանակ մի քանի տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է: Վերջին տարիների ուսանողական հարցումների նրա միջին գնահատականը կազմում է 4.40:

Ելույթ ունեցողները, բարձր գնահատելով Աշոտ Ներսիսյանի մարդկային արժանիքները, մասնագիտական կարողությունները, բարձր գիտական հեղինակությունը, առաջարկեցին թույլատրել քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում:

Քվեարկությունը կազմակերպելու համար ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ պ. գ. դ., պրոֆ. Ա. Ն. Հայրունի /նախագահ/, անդամներ՝ պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան, ՈՒԳԸ նախագահ Ս. Մ. Բալդարյան:

Քվեարկության ավարտից հետո մրցութային հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է ֆակուլտետի գիտական խորհրդի 39 անդամից 30-ը: Քվեատուփում հայտնաբերվել է 30 քվեաթերթիկ: Վավեր քվեաթերթիկները թիվը՝ 30:

Աշոտ Արտաշեսի Ներսիսյանի թեկնածության օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 29, դեմ՝ 1 ձայն, ձեռնպահ՝ 0 ձայն:

Է. Գ. Մինասյանն առաջարկեց հաստատել քվեարկության արդյունքները:

Քվեարկության արդյունքները հաստատվեցին միաձայն:

Որոշեցին՝

1. Հաստատել Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի քվեարկության արդյունքները:

2. Դիմել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին՝ պ. գ. դ., պրոֆ. Աշոտ Արտաշեսի Ներսիսյանի թեկնածությունը սահմանված ընթացակարգով քվեարկության դնելու համար:

Դեկան Է. Գ. Մինասյանը շնորհավորեց գործընկերներին, նրանց մաղթելով բեղուն գիտամանկավարժական աշխատանք ու նոր հաջողություններ իրենց կարևոր ու պատասխանատու աշխատանքում:

Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ
պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյան

Խորհրդի գիտական քարտուղար
պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան